ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1363-27.05.2026-ՊԱ-011/0) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անցումային լուծմամբ ոստիկանության՝ 2020թ. հունվարի 1-ից մինչև 2026թ. մայիսի 1-ը ներառյալ կայացրած ակտի հիմքով վարելու իրավունքից զրկված անձանց ևս հնարավորություն է տրվում պետական տուրքի վճարմամբ փորձաշրջան անցնելու եղանակով վերականգնելու վարելու իրավունքը՝ **օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 տարվա** ընթացքում դիմելու դեպքում: Ընդ որում, ներկայիս	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			կարգավորումներով վարելու իրավունքից զրկումը, որպես վարչական պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել նաև 1 տարուց ավելի ժամկետով: Ուստի անցումային կարգավորումները վերոնշյալ ժամանակահատվածում վարելու իրավունքից զրկված բոլոր անձանց նկատմամբ կիրառելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է այն խմբագրել: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետային միջակայքում վարելու իրավունքը դադարելու հիմքի վերացումը կարող է ունենալ 2 տարբերակ՝ 1) մինչև օրենքն ուժի մեջ մտնելը, 2) օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Ուստի, անհրաժեշտ է կիրառել տարբերակված մոտեցում:		

			Բացի այդ, սոցիալական արդարության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է նախագծի անցումային դրույթներով նախատեսված ժամանակային միջակայքի վերջնաժամկետը սահմանել ոչ թե 2026թ. մայիսի 1-ը, այլ՝ օրենքի ուժի մեջ մտնելը: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վարելու իրավունքից զրկելու մասին Հայաստանի Հանրապետության իրավասու այլ մարմնի (ոստիկանության)՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացրած ակտի հիմքով դադարեցված Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված		

			վարելու իրավունքը մեկ անգամ վերականգնվում է առանց որակավորման քննություններ հանձնելու՝ օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ, և սահմանվում է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով՝ 1) սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում դիմելու դեպքում, եթե վարելու իրավունքը դադարելու հիմքը վերացել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը. 2) վարելու իրավունքը դադարելու հիմքը վերանալուց հետո 1 տարվա ընթացքում դիմելու դեպքում, եթե վարելու իրավունքը դադարելու հիմքը վերացել է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:»:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս	Օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման նպատակով առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում «1-ին մասի 2-րդ կետի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**